ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2018-2020 ԹԹ. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՀՈՒՆՎԱՐ-ՄԱՅԻՍ, ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտներ)













2020 թ. հունվար-մայիս ժամանակահատվածում պետական բյուջեի հարկային եկամուտները և պետական տուրքերը կազմել են 583. 65 մլրդ դրամ, որը կազմում է 2020թ. կիսամյակի համար հաստատված մակարդակի 75.8 %-ը: Ընդ որում, 2020 թ. փաստացի ցուցանիշը 2019թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 2.2 %-ով, իսկ 2018թ. համապատասխան ցուցանիշը 29.3 %-ով:

2020 թ. հունվար-մայիսին՝

- ավելացված արժեքի հարկի գծով մուտքերը կազմել են 181.2 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշը զիջում է 3.5 %-ով, սակայն 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 13.3 %-ով,
- շահութահարկի գծով մուտքերը կազմել են 94.9 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 14.8 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 30.3 %-ով,
- եկամտային հարկի գծով մուտքերը կազմել են 175.8 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 4.9 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 25.6 %-ով,
- ակցիզային հարկի գծով մուտքերը կազմել են 43.1 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 4.9 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 13.6 %-ով,
- մաքսատուրքերի գծով մուտքերը կազմել են 24.5 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշը զիջում է 27.2%-ով, իսկ 2018 թ. ցուցանիշը զիջում է 24.2 %-ով,
- բնապահպանական հարկի և բնօգտագործման վճարների գծով մուտքերը կազմել են 17.9 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 24.7 %-ով, սակայն 2018 թ. մակարդակից պակաս է 17.5 %-ով,
- շրջանառության հարկի գծով մուտքերը կազմել են 14.2 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 9.6 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 56.9 %-ով,
- սոցիալական վճարների գծով մուտքերը կազմել են 9.2 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 16.7 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 20.4 %-ով,
- այլ հարկային եկամուտներից մուտքերը կազմել են 9.9 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշը գերազանցում է 22.9 %-ով, իսկ 2018 թ. ցուցանիշը գերազանցում է 10.7 %-ով,
- պետական տուրքերի գծով մուտքերը կազմել են 12.9 մլրդ դրամ, որը 2019 թ. համապատասխան ցուցանիշից պակաս է 3.4 %-ով, սակայն 2018 թ. ցուցանիշից ավել է 5.9 %-ով:

Հարկերի անցումային գերվճարները 2020թ. հունվար-մայիս ամիսներին կազմել են -178.1 մլն դրամ՝ 2019թ. -208.3 մլն դրամի և 2018թ. -54.9 մլրդ դրամի դիմաց:

Տեղեկատվության աղբյուր են հանդիսացել ՀՀ ՊԵԿ կայքում հրապարակված տեղեկատվությունը 2018-2020թթ. ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող եկամուտների վերաբերյալ

* Ներառված են նաև եկամտահարկից և պարտադիր սոցիալական ապահովության վճարներից եկամուտները,

** Այլ հարկային եկամուտներում ներառված են՝ ճանապարհային հարկը, հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, հարկային օրենսդրությունը խախտելու համար գանձվող տույժերը և տուգանքները, միասնական մաքսային վճարը, դրոշմանիշային վճարները և այլ եկամուտներ (այդ թվում նաև՝ ՀՀ ՊԵԿ արտաբյուջետային ֆոնդին մուտքագրված գումարները)